



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ժողովրդավարությունը դեպի ինքնիշխանություն տանող ճանապարհ

Արցախում ԼՂՀ 6-րդ գումարման ԱԺ ընտրությունները համարվում են կայացած: Կարծես թե ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունները, մեծ հաշվով, գոհ են ընտրություններից, թեև ոչ բոլոր քաղաքական ուժերի ակնկալիքներն են այս ընտրություններին վերածվել իրականության: Համենայնդեպս, այս ընտրությունները, ի համեմատ Նախորդի, անցել են քաղաքական առողջ մրցակցության պայմաններում, առանց լուրջ միջադեպերի՝ անկախ նրանից, թե որ ուժը որ ճամբարում էր գործում:

Մայիսի 3-ի ընտրություններն Արցախում ժողովրդավարության սկզբունքների ամրագրմանն ու պետականության կայացմանն ուղղված մի գործընթաց էին: Դրա վառ ապացույցը ընտրություններին հայտ ներկայացրած յոթ կուսակցություններից 5-ի՝ ԼՂՀ-ի Կազմակերպության 2-րդ հաղթահարելու հանգամանքն է: Այս ընտրություններով առաջին անգամ ԼՂՀ-ն պրոֆեսիոնալ խորհրդարան է ունենալու, ինչն էլ ենթադրում է, որ պետք է ավելի մեծանա Արցախի քաղաքական ուժերի՝ երկրի կառավարման քաղաքական պատասխանատվության չափը:

Արցախի Հանրապետության հերթական ԱԺ ընտրությունները միջազգային մասշտաբով լայն արձագանքներ ստացան: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած դիտորդների գնահատմամբ՝ ընտրություններն անցան բնականոն: Ինչ վերաբերում է Միսակի խմբի այն հայտարարությանը, որ ընտրության արդյունքները չեն կարող ազդել ԼՂ հիմնահարցի կարգավորման վրա, յուրօրինակ քաղաքական մոտեցում էր՝ քաղաքական «հայտնի կանոններով» պայմանավորված: Այնուամենայնիվ, Միսակի խումբը կշեռ սեփական ապագան որոշելու հարցում Արցախի ժողովրդի իրավունքի մասին, ինչն իրենից ենթադրում է հարցի վերաբերյալ ոչ ուղղակի, քաղաքական նուրբ մոտեցում:

Ընտրությունների արդյունքում արցախցիների զգալի մասն իր քվեն տվեց «Ազատ հայրենիք» կուսակցությանը, ինչը, կարծում ենք, նշյալ քաղաքական ուժի համար ավելացնում է ոչ միայն քաղաքական կշիռը, այլև Արցախի ողջ ժողովրդի առջև առավել պատասխանատու քաղաքական կեցվածք ընդունելու անհրաժեշտությունը, երկրի կառավարման հարցում առավել ճկուն ու արհեստավարժ քաղաքական դիմագծով ներկայանալու հանգամանքը:

ՀՀ Դաշնակցության օգտին քվեարկած քաղաքացիները ցույց տվեցին իրենց վստահությունը ՀՀ-ի նախընտրական ծրագրին ու կուսակցության որդեգրած «Խաղաղություն, արդարություն, աշխատանք» կարգախոսին: Սա վկայում է ոչ միայն այն մասին, որ Արցախի ժողովուրդը բավականին մեծ ակնկալիքներ է կապում Դաշնակցության հետ, այլ՝ որ կուսակցության համար ստեղծվում է ասպարեզ իր կողմնորոշումներին ու առաջարկություններին քաղաքական կշիռ ու օրենքի ուժ հաղորդելու, երկրի կառավարման գործում անմիջական մասնակցություն ցուցաբերելու համար: Այս ընտրություններով, փաստորեն, ՀՀ-ն ԼՂՀ բնակչության կողմից համամասնական ընտրակարգով շուրջ 20 տոկոսի քվեն ստանալով էլ ունենալով 3 մեծամասնական կարգով ընտրված պատգամավորներ՝ հնարավորություն կունենա ավելի մեծ կազմով ներկայանալու ԼՂՀ 6-րդ գումարման ԱԺ-ում՝ դառնալով երկրի խորհրդարանում գործող 2-րդ քաղաքական ուժը:

Ժողովրդավարության ուղին որդեգրած Արցախի ժողովուրդը եւս մեկ քայլ կատարեց դեպի ինքնիշխանություն:



Պետք է կարողանանք միջազգայնորեն ամրագրել մեր հաղթանակը. Հրանտ Մարգարյան

Մայիսյան Եռատոնի կապակցությամբ Արցախում տոնական եռուգեռ էր, միջոցառումներ՝ Շուշիում եւ մայրաքաղաք Ստեփանակերտում:

Արցախ էին ժամանել մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ Հայաստանի Հանրապետությունից, ինչպես նաեւ Արցախյան շարժմանն ու պատերազմի մասնակիցներ, մեծաթիվ հյուրեր:

Արցախում էին ՀՀ-ի բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, ՀՀ-ի բյուրոյի եւ Գերագույն մարմնի անդամներ, կուսակցական ընկերներ, ովքեր Մայիսի 9-ին այցելեցին Ստեփանակերտի Հուշահամալիր եւ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների հիշատակին: Նրանք այցելեցին նաեւ Ստեփանակերտում Աշոտ-Բեկորի /Աշոտ Ղուլյան/ անվան պուրակ եւ ծաղիկներ խոնարհեցին գաղափարական ընկերոջ անունը հավերժացնող հուշարձանին:

Կուսակցական ընկերները մասնակցություն ունեցան Ստեփանակերտում եւ Շուշիում Մայիսի 9-ի՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի, Շուշիի ազատագրման 23-ամյակի եւ Պաշտպանության բանակի կազմավորմանը նվիրված միջոցառումներին:

«Ապառաժ»-ի հետ ունեցած զրույցի ընթացքում Հրանտ Մարգարյանը կշեռ. «Մենք հաղթել ենք Արցախյան պատերազմում, ու մեր հաղթանակը պետք է կարողանանք միջազգայնորեն ամրագրել: Կարելի է, որ հայ ժողովուրդը միասնականորեն ամեն տեղ ոտքի ելնի, որպեսզի կարողանանք ճշման նոր ալիք բարձրացնել: Սա մեր արդար պահանջն է եւ պետք է պարտադրեք միջազգային հանրությանը եւ առաջին հերթին Արցախին՝ ճանաչելու մեր հաղթանակը: Այս հարցում ես հատուկ դեր չեմ վերապահում ո՛չ Հայաստանի Հանրապետության, ո՛չ Ղարաբաղի Հանրապետության իշխանու-

թյուններին, ո՛չ Սփյուռքին, ո՛չ էլ որեւէ քաղաքական ուժի. սա այն օրակարգն է, որտեղ մենք պետք է մի ձայնով խոսենք, միասնականությունն այս հարցում շատ կարեւոր է: Անելիքը բոլորինս է»:

Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյի ներկայացուցիչը նաեւ կարծիք հայտնեց օրերս ԼՂՀ-ում կայացած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ: Ըստ Հ. Մարգարյանի՝ ԼՂՀ-ում անցկացված ընտրություններին միջազգային դիտորդների բարձր գնահատականները կարող են նպաստել ԼՂՀ ճանաչման գործընթացին: «Մենք ապացուցում ենք աշխարհին, որ կարողանում ենք մեր հաղթանակը մարդկությանը հատուկ ժամանակակից ձեւով վայելել, կարողանում ենք ժողովրդավարություն ստեղծել, կարողանում ենք զարգացում ապահովել, պետություն կառուցել: Այս քայլերը գալիս են ամրապնդելու մեր անկախությունը», - ասել է նա:

ՀՀ-ն՝ Արցախի երկրորդ քաղաքական ուժ



Ս.թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ Դաշնակցության Արցախի ԿԿ-ի նիստը, որի ընթացքում քննարկվեց 2015 թվականի մայիսի 3-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքները: ՀՀ-ի Արցախի ԿԿ-ն հաստատեց.

Կարդացե՛ք 2-րդ էջում

Շուշիի առանձնակի գումարտակ



Շուշիի առանձնակի գումարտակն ստեղծվել է 1992 թվականի նոյեմբերի 1-ին՝ Գետաշեն-Շահումյանի կռիվների բովով անցած դաշնակցական ջոկատների հենքի վրա:

Կարդացե՛ք 4-րդ էջում

ՀՀ-ն՝ Արցախի երկրորդ քաղաքական ուժ

Ս.թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ Դաշնակցության Արցախի ԿԿ-ի նիստը, որի ընթացքում քննարկվեց 2015 թվականի մայիսի 3-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքները: ՀՀ-ն Արցախի ԿԿ-ն հաստատեց:

1. ԼՂՀ 6-րդ գումարման ԱԺ ընտրությունները պետք է համարել առաջադասում մեր երկրում ժողովրդավարության սկզբունքների արմատավորման եւ պետականության կայացման գործում: Դրա վառ ապացույցը ընտրություններին մասնակցած 7 կուսակցություններից 5-ի՝ նվազագույն շեմի հաղթահարումն է:

2. ՀՀ-ն Արցախի ԿԿ-ն իր երախտիքն է հայտնում շուրջ 13.000 այն քաղաքացիներին, ովքեր վստահելով ՀՀ Դաշնակցությանը՝ քվեարկեցին «հաղադություն,




արդարություն, աշխատանք» կարգախոսի օգտին:

3. ՀՀ-ն Արցախի ԿԿ-ն համոզված է, որ երկրի կառավարման քաղաքական պատասխանատվությունն իր վրա կվերցնի մեծամասնության քվեն ստացած քաղաքական ուժը:

4. Ընտրությունների արդյունքներից ելնելով՝ ԿԿ-ն փաստում է, որ ՀՀ-ն ԼՂՀ բնակչության կողմից համամասնական ընտրակարգով շուրջ 20 տոկոսի քվեն ստանալով եւ ունենալով 3 մեծամասնական կարգով ընտրված պատգամավորներ՝ ավելի մեծ կազմով է ներկայանալու ԼՂՀ 6-րդ գումարման ԱԺ-ում՝ դառնալով խորհրդարանում գործող 2-րդ քաղաքական ուժը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճնորհակալություն բոլոր նրանց, ովքեր վստահել եւ հավատացել են ՀՀ Դաշնակցությանը. Դավիթ Իշխանյան



Aparaj.am-ի հարցին պատասխանում է ՀՀ-ն Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը:

- **Պարոն Իշխանյան, Արցախում ավարտվեց եւս մեկ քաղաքական գործընթաց՝ ԼՂՀ ԱԺ 6-րդ գումարման ընտրությունները: Ինչպիսի՞ն է Ձեր գնահատականը, որքանով արդարացան ՀՀ-ն ակնկալիքները:**

- Մայիսի 3-ին կայացած ԼՂՀ ԱԺ հերթական ընտրություններն, իմ դիտարկմամբ, անցել են առանց լուրջ ընտրախախտումների, նորմալ մթնոլորտում: Ժողովրդի մտ առկա էր բարձր տրամադրություն, եւ սա, իհարկե, ողջունելի է:

Մեր ժողովուրդն իր ակտիվությամբ ապացուցեց, որ վստահում է Արցախի քաղաքական ուժերին, եւ այդ ուժերն աստիճանաբար դառնում են դերակա-

տար՝ իրենց շուրջը համախմբելով որոշակի ընտրազանգվածի:

Պետք է նշեմ, որ ՀՀ-ն քարոզարշավն անցավ բավականին կազմակերպված եւ նպատակուղղված: Մեր թեկնածուները հնարավորություն ունեցան գտնվելու հանրապետության բոլոր շրջաններում եւ տեղում ծանոթանալու ժողովրդին հուզող խնդիրներին: Առիթից օգտվելով՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր թիմին ակտիվ գործունեության համար եւ բոլոր նրանց, ովքեր վստահել եւ հավատացել են ՀՀ Դաշնակցությանը: Մենք քարոզարշավի ընթացքում շեշտը դրել էինք երկրի առջեւ ծառայած մարտահրավերների վրա, եւ ժողովրդին ներկայացրել ու նրա հետ քննարկել այդ ուղղությամբ արվելիք աշխատանքները:

Ընտրությունների արդյունքներն, իհարկե, ՀՀ Դաշնակցության համար գո-

հացուցիչ չեն: Մեր ակնկալիքներն, ակնկալեմք, առավել էին: Սակայն ես գնահատում եմ այն առաջընթացը, որ այս ընտրություններում արձանագրվեց: Հաջողվել է վերականգնել մարդկանց վստահությունը ընտրությունների նկատմամբ, այդ է վկայում ընտրողների մասնակցության թիվը: Արցախի ժողովուրդը եւս մեկ անգամ փաստեց, որ անտարբեր չէ իր երկրում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ:

Առիթից օգտվելով՝ ուզում եմ շնորհավորել նաեւ ԼՂՀ խորհրդարան մուտք գործած կուսակցություններին՝ հնարավորինս կազմակերպված ընտրություններ անցկացնելու համար, եւ մաղթել նրանց արդյունավետ աշխատանք ԱԺ-ում՝ ի շահ Արցախի ժողովրդի եւ նրա բարօրության:

«ԱՊՄԱԺ»

Միջազգային անդրադարձը ԼՂՀ խորհրդարանական ընտրություններին

ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները բավականին հետաքրքիր արձագանք ունեցան միջազգային հանրության շրջանակներում: Ի տարբերություն Արցախում անցկացված նախորդ համապետական ընտրությունների, որոնց հանդեպ միջազգային հանրությունը բացասական հայտարարություններով էր հանդես գալիս, այս անգամ՝ փոքր-ինչ այլ էր: Սա, կարծես թե, վրիպեց հայ վերլուծաբանների եւ հայկական մամուլի աչքից:

Մի քանի կարեւոր դիտարկումներ.

1. Ընտրություններին մասնակցում էին մեծ թվով միջազգային դիտորդներ, այդ թվում՝ գործող պատգամավորներ տարբեր երկրներից, ինչպես նաեւ Եվրախորհրդարանի պատգամավորներ: Սա ավելի համոզիչ դարձրեց ԼՂՀ խորհրդարանական ընտրություններում դիտորդական առաքելությունների գնահատականները:

2. Հայտարարություն տարածելով Արցախի խորհրդարանական ընտրությունների մասին՝ հատուկ նշում էին, որ ընտրությունները չեն ճանաչում, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միջազգայնորեն չի ճանաչվել: Այսինքն՝ ընտրությունները ոչ լեգիտիմ, անօրեն չեն համարել՝ կապելով դա Ադրբեյջանի տարածքային ամ-

բողջականության հետ:

Առավել հետաքրքիր է ԱՄՆ պետդեպարտամենտի (արտգործնախարարության) կողմից տարածած հայտարարությունը: Այդ գերատեսչությունը ներկայացնող պաշտոնյա Ջեֆ Ռատկեն Արցախում մայիսի 3-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ հետեւյալ հայտարարություն է արել. «ԱՄՆ-ն Լեռնային Ղարաբաղը՝ որպես անկախ ինքնիշխան պետություն չի ճանաչում, այդ պատճառով մենք չենք ընդունի մայիսի 3-ին կայանալիք ընտրությունների արդյունքները», այսինքն՝ Միացյալ Նահանգները Արցախի ընտրությունների չճանաչման որեւէ առիթ կամ պատճառ չունի՝ հիմնավորելով այն երկրի չճանաչվածությամբ: Ընտրությունների ոչ լեգիտիմության մասին ոչ մի խոսք չի եղել հայտարարության մեջ:

Այնուհետեւ հայտարարության մեջ ընդգծվում է. «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պետք է դերակատարում ունենա իր ապագայի որոշման հարցում»: Սա, թերեւս, նորույթ է նման հայտարարությունների համատեքստում: Նախկինում ոչ մի հայտարարությունում նման անդրադարձ չի եղել: Ի դեպ, նմանօրինակ հայտարարություն են տարածել նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ ընդգծելով

իրենց երկրների վերաբերմունքը ընտրությունների նկատմամբ. «Հակամարտության համապարփակ կարգավորման համատեքստում մենք ճանաչում ենք Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դերն իր ապագան որոշելու հարցում: Այնուամենայնիվ, մեր երեք երկրներից եւ ոչ մեկը, ինչպես նաեւ որեւէ այլ երկիր, չի ճանաչում Լեռնային Ղարաբաղը՝ որպես անկախ եւ ինքնիշխան պետություն: Համապատասխանաբար, մենք չենք ընդունում այս ընտրությունների արդյունքների ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի վրա եւ շեշտում, որ դրանք որեւէ կերպ չեն կանխորոշում ԼՂ-ի վերջնական կարգավիճակը կամ ընթացիկ բանակցությունների արդյունքները, որոնց նպատակն է հասնել ԼՂ հակամարտության տեսական եւ խաղաղ կարգավորմանը»:

Ինչ է նշանակում «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դերն իր ապագան որոշելու հարցում»: Սա միաշառակ նշանակում է այն, որ միջազգային հանրությունն ընդունել է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հիմքում պետք է դրված լինի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտությունը, իսկ ընտրությունների անցկացումը լավագույնս արտահայտում է այդ կամարտահայտության մեխանիզմների

հստակ առկայությունն Արցախում:

Կրկին պետք է նշեմ, որ ի տարբերություն նախորդ համապետական ընտրությունների, այս ընտրությունների վերաբերյալ միջազգային հանրության, հատկապես ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Եվրամիության արձագանքներում դրական տեղաշարժեր են տեղի ունեցել՝ նախ այն համատեքստում, որ վերջ նշված երկրներից եւ ընդհանրապես առաջադեմ ոչ մի երկիր ընտրությունները հակաօրինական չի համարել, ինչպես նաեւ՝ հստակ նշում են, որ Արցախի ժողովուրդն իրավունք ունի ընտրությունների միջոցով իր կամարտահայտությամբ մասնակցել իր ճակատագրի որոշմանը: Եթե այլ կերպ ասենք, ապա պետք է նշել, որ սա մի քայլ առաջ է միջազգային հանրության կողմից Արցախում եւ նրա շուրջ տեղի ունեցող գործընթացներում արդարացի որոշումներ կայացնելու համար: Ու այլ լեւս ադրբեյջանական կեղծարարություններն ու խավիարային դիվանագիտությունն ի գործ չեն միջազգային հանրության տեսադաշտից հեռու պահել Արցախում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները՝ դրանց վերաբերյալ իրական գնահատական տալու համար: Կարելի է ասել՝ սայլը տեղից շարժվել է:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվրախորհրդարանում կանցկացվեն ԼՂ ինքնորոշմանը նվիրված քննարկում եւ Արցախի ամիս

Տարին բուռն է լինելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Եվրոպական խորհրդարանի միջեւ լայն գործակցության առումով: Այս տարվա ընթացքում նախատեսվում են մի շարք զանգվածային միջոցառումներ, որոնց նպատակն է՝ ոչ միայն աշխարհին ներկայացնել Արցախի հարցը, այլև միջազգային օրակարգում պահել ինքնորոշման խնդիրը: «Արմենպրես»-ի հետ զրույցում ՀՀ-ի Հայ Ղառուբի Եվրոպայի հանձնախմբի ղեկավար Գասպար Կարապետյանը նշում է, որ հունիսին Եվրոպական խորհրդարանում կկայանա ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին նվիրված գիտաժողով, որի հիմքում կլինի ԼՂԾ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը:

«Գիտաժողովը կընթանա երկու ուղղությամբ՝ գիտական եւ քաղաքական: Կմասնակցեն Եվրախորհրդարանի պատգամավորները, նաեւ գիտնականներ, միջազգային իրավունքի մասնագետներ»,-ասաց Գասպար Կարապետյանը՝ հավելելով, որ նման քննարկումների նպատակն է ոչ միայն ուշադրություն հրավիրել ԼՂ հիմնահարցին, այլև միջազգային հանրության ընկալմանը հասցնել փաստը, որ ազգերի ազատ ինքնորոշումը պետք է վեր դասվի ամեն ինչից: Արցախի թեման Եվրախորհրդարանում կրկին օրակարգային կդառնա սեպտեմբերին: Արցախի անկախու-

թյան օրվա առթիվ Եվրոպական խորհրդարանի շենքում ոչ միայն կկայանա հյուրասիրություն, որին կմասնակցեն Եվրախորհրդարանում Լեռնային Ղարաբաղի բարեկամության խմբի պատգամավորները, այլև քննարկում



նվիրված հայկական երկրորդ պետությանը: «Հոկտեմբերին կկազմակերպվի Արցախի ամիս Եվրախորհրդարանում: Սա ավանդական միջոցառում է, եւ իրականացվում է երկրորդ անգամ»,-ասաց Կարապետյանը՝ հավելելով, որ շատ քիչ երկրներ են ունենում նման

ամիսներ Եվրոպական այդ հեղինակավոր կառույցում: Բացի քաղաքական համագործակցությունից, շեշտը կդրվի նաեւ մշակութային եւ կրթական հարաբերությունների զարգացմանը: Մասնավորապես, Արցախի եւ Բելգիայի պե-

տական համալսարանների միջեւ կնքվել է գործակցության համաձայնագիր, ինչի արդյունքում մայիսի կեսերին Բելգիայի համալսարանի քաղաքական գիտությունների մի խումբ դասախոսներ կայցելեն Ստեփանակերտ եւ հանդիպումներ կունենան ուսանողների հետ: Հունիսին էլ Արցախի պետական հա-

մալսարանի երկու դասախոսներ կգնան Բելգիա եւ կունենան հանդիպումներ եւ փորձի փոխանակում: «Այս ամենը միտված է հասնելու այն իրականությանը, որ Եվրախորհրդարանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը»,-ասաց Կարապետյանը՝ հավելելով, որ դա երկար աշխատանք է, եւ արդյունքը չի կարող լինել միանգամից:

Գասպար Կարապետյանը հավելում է, որ նման միջոցառումները հիմք են նախապատրաստում, որ Եվրոպայում ապրող մարդիկ տեսնեն ու հասկանան Արցախի Եւրոյունեն ու հարցը քննարկեն առաջին հերթին մարդկային տեսանկյունից: «Հենց դա է պատճառը, որ՝ բացի քաղաքական հարցերից, նաեւ գիտական եւ մշակութային քննարկումներ են կազմակերպում, որպեսզի մարդիկ հասկանան, որ Արցախը աճող, զարգացող պետություն է»,-նշեց Կարապետյանը: Մշակութային ծրագրերի շրջանակում նա կարելու է հոկտեմբերին Եվրախորհրդարանում Արցախի երիտասարդ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը: Այժմ Եվրոպայում լայն թափով ներկայացվում է նաեւ արցախյան գորգագործության առանձնահատկությունը: Դրանք առաջին հերթին ներկայացվում են ոչ թե բիզնեսի, այլ մշակույթի ու պատմական տեսանկյունից:

arfd.am

Բանակը գինում ենք ոչ թե պատերազմելու, այլ խաղաղությունը պաշտպանելու համար. Մովսես Հակոբյան



1994-ի մայիսի 12-ին կնքված հրադարարի համաձայնագիրը թեեւ պարտադրված էր Ադրբեջանին, դրան սպասում էին բոլորը: Ծիշտ 21 տարի անց հակառակորդը հերթական անգամ սխալվում է՝ փորձելով վերսկսել պատերազմը, ինչն անկասկած նորից բերելու է հրադարարի, որը վստահաբար դարձյալ պարտադրված կլինի Ադրբեջանին եւ ավելի ցավոտ պայմաններով՝ ասաց ԼՂՀ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը Արցախում լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

«Կարծում եմ, որ պատերազմից հետո հրադարարի համաձայնագիրը լավագույն լուրն էր Ադրբեջանի եւ Արցախի ժողովուրդների համար: Սկզբնական շրջանում այն բավական լավ պաշտպանվում էր եւ, որպես այդպիսին, միտումնավոր խախտումներ չէին լինում: Սակայն վերջին տարիներին մենք տեսնում ենք, որ հրադարարի ռեժիմը միտումնավոր խախտվում է եւ որոշակի նպատակներ է հետապն-

դում», - ասաց Մովսես Հակոբյանը՝ հավելելով, որ Արցախի բանակը չի ուզում պատերազմ սկսել՝ այդ մասին նշելով քաղաքական իշխանության բոլոր հայտարարություններում եւ պատրաստակամությունն հայտնելով մասնակցել բանակային գործընթացին: ՊԲ հրամանատարն ընդգծեց, որ Արցախը պատրաստ է փոխգիշտումային տարբերակին, ինչը չի ընկալում հակառակորդը: Ադրբեջանում միայն գիշտում են ակնկալում, իսկ նման կերպ խնդիրները չեն կարգավորվում:

«Երբ Ադրբեջանը կհասկանա, որ կարելի է գնալ փոխգիշտման եւ փոխգիշտում ասվածը ճիշտ կընկալի, կարծում եմ՝ այս տարածաշրջանում կհաստատվի վերջնական խաղաղություն, ինչի համար բոլոր նախադրյալները կան»,- ասաց Մովսես Հակոբյանը:

Նա կարելու է քաջատեղյակ են Ադրբեջանի ռազմական պոտենցիալին եւ սպառնալիքներից առաջ էլ ամբողջությամբ տիրապետում են տեղեկությանը, թե ինչ, որքան, որտեղ, որ ժամի եւ ումից են գնել: Հրամանատարը միայն հավելեց, որ դրան համապատասխան՝ ՊԲ ստորաբաժանումները գինված են եւ պատրաստ հակառակորդի հավանական գործողություններին:

«Մենք մեր բանակը գինում ենք ոչ թե պատերազմ սկսելու, այլ խաղաղությունը պաշտպանելու համար: Մենք այդպես ենք ուզում ապրել, մենք որեւէ մեկին ցավ ու դժբախտություն չենք ցանկանում պատճառել, բայց չենք հանդուրժի նաեւ որեւէ մեկի՝ մեր դեմ ուղղված քայլերը: Ցեղասպանության

100-րդ տարելիցն է. այն մեր ամենամեծ դասն է: Այլեւս հայ ժողովուրդը ցեղասպանություն չի ապրելու եւ այնս իր հայրենիքը չի լքելու. սա բոլորը պետք է հասկանան՝ եւ մեր հակառակորդները, եւ մեր բարեկամները, - ասաց ՊԲ հրամանատարը՝ հավելելով,- երբ կհասկանան, բանակցելու եւս հեշտ կլինի, եւ մենք, որպես հարեւան ժողովուրդ, կկարողանանք կողք կողքի ապրել»:

Հ.Գ.- 1994թ. մայիսի 5-ին ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի, Ղրղզստանի Հանրապետության, ՌԴ ԴԺ եւ ԱԳՆ նախաձեռնությամբ կայացավ հանդիպում, որի ավարտին Ադրբեջանի Միլի մեջլիսի, Հայաստանի Գեներալյան խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները ստորագրեցին Բիշքեկյան արձանագրությունը, որով կոչ էր արվում դադարեցնել կրակը 1994թ. մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը:

Մայիսի 9-ին Լեռնային Ղարաբաղում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը նախապատրաստեց Անժամկետ հրադարարի մասին համաձայնագիրը, որը նույն օրը ստորագրեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Սամեդ-րաֆի Սամեդովը: 1994թ. մայիսի 10-ին Երեւանում համաձայնագիրը ստորագրեց պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, իսկ մայիսի 11-ին՝ ԼՂ բանակի հրամանատար Սամվել Բաբայանը: Հրադարարն ուժի մեջ մտավ 1994թ. մայիսի 12-ի կեսգիշերին: Փաստաթղթում նշված է. «Արձագանքելով Բիշքեկում 1994թ. մայիսի 5-ին կնքված արձանագրության մեջ շարադրված՝ կրակը դադարեցնելու մասին կոչին, եւ հիմք ընդունելով 1994թ. փետրվարի 18-ի արձանագրությունը, հակամարտող կողմերը պայմանավոր-

վել են հետեւյալի մասին՝
 1. Ապահովել հրադարար եւ ռազմական գործողությունների ամբողջական դադարեցում 1994թ. մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից: Կրակը դադարեցնելու մասին համապատասխան հրամանները կտրվեն ու կհասցվեն գինված կազմավորումների հրամանատարներին, որոնք պատասխանատու են դրանց կատարման համար՝ ոչ ուշ, քան 1994թ. մայիսի 11-ին: Մայիսի 12-ին, մինչեւ 23.00-ն կողմերը կփոխանակեն կրակը դադարեցնելու մասին հրամանների տեքստերը՝ հետագայում այն լրացնելու եւ նմանատիպ փաստաթղթերի հիմնական դրույթները ունիֆիկացիայի ենթարկելու նպատակով:
 2. Խնդրել ՌԴ պաշտպանության նախարարին՝ մայիսի 12-ից ոչ ուշ հրատապ խորհրդակցություն հրավիրել Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարների ու ԼՂՀ ՊԲ հրամանատարի միջեւ՝ նպատակ ունենալով համաձայնեցնել զորքերի տարանջատման սահմանները, ռազմատեխնիկական այլ հրատապ հարցերն ու նախապատրաստելով միջազգային դիտորդների առաջատար խմբի ծավալումը:
 3. Այս պայմանավորվածությունը կօգտագործվի՝ բանակցությունները 10 օրվա ընթացքում ավարտելու եւ մայիսի 22-ից ոչ ուշ Ռազմական հակամարտության հրադարարի մասին համաձայնագրի ստորագրման համար:
 4. Սույն պայմանավորվածությունն ուժի մեջ է մտնում այն բանից անմիջապես հետո, երբ Միջնորդը կիրազեկի, որ հակամարտող կողմերից ստացել է լիովին համարժեք փաստաթղթեր՝ ստորագրված լիազոր ներկայացուցիչների կողմից:

«ԱՊՐԱՍԺ»

Հայի համար Շուշի բառի հիմնական իմաստը դարձել է մեկ բառ՝ հաղթանակ

Շուշիի ազատագրումը պատմական անհրաժեշտություն էր՝ կոչված վերականգնելու հայկական հիմնավոր հողի վրա հայերի ապրելու անկապտելի իրավունքը, ինչպես նաև ամրապնդելու մարտերում կոփված հայոց հաղթական ոգին: Դրանով Արցախյան շարժումը թեևակոխել է որակական նոր փուլ՝ վճռական բեկում է մտցվել պատերազմում, եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը դարձել է ավելի քան իրական:

Շուշիի ազատագրումը նաև տևտեսական անհրաժեշտություն էր: Ցամաքային եւ օդային ճանապարհների շրջափակման, էլեկտրաէներգիայի, գազի ու խմելու ջրի պակասի եւ Շուշիից անընդհատ հրթիռակոծությունների պատճառով Ստեփանակերտում ու հարակից բնակավայրերում, ինչպես նաև ողջ հանրապետությունում կաթածահար էր եղել տնտեսությունը: Շուշին այդ օրերին վերածվել էր Ստեփանակերտը հրետակոծող թիվ 1 կրակակետի: 1991 թ. նոյեմբերից մինչև 1992 թ. մայիսի սկիզբ Շուշիից, Ջանհասանից, Զյոսալարից, Ղայբալուից Ստեփանակերտի վրա արձակվել է

շուրջ 4740 արկ, որից մոտ 3 հազարը «Գրադ» կայանքներից: Այդ հրետակոծությունների հետեւանքով գոհվել են 111 եւ վիրավորվել 332 խաղաղ բնակիչներ, ավերվել է 370 բնակելի տուն ու շինություն:

Գործողությանը նախապես տրվել է «Հարսանիք լեռներում» անվանումը: Հայ մարտիկները, գրոհելով միաժամանակ 4 ուղղություններով, աչքի են ընկել կազմակերպվածությամբ, բացառիկ խիզախությամբ:

Հակառակորդը հիմնական ուժերը կենտրոնացրել էր Զյոսալարում, Լիսազորում, Չամալում, Շուշիի մատույցներում եւ քաղաքի ամբողջ շրջագծով:

Շուշիի ազատագրմամբ հնարավոր է դարձել նաև Լաչինի ռազմագործողությունը՝ ԼՂՀ շրջափակման օղակի ճեղքումը:

Շուշիի ազատագրումը վերջնականապես հողմացրիվ է արել թվաքանակով ու միջոցներով գերակշռող հակառակորդին սեփական ուժերով հաղթելու անհնարինության մասին առասպելը: Մյուս կողմից, այն բարոյափոխական խորտակիչ հարված է հասցրել հակառակորդին, որն այդպես էլ հե-

տագա մարտական գործողությունների ողջ ընթացքում չի կարողացել հաղթահարել պարտվածի բարոյությունը:

Այս հաղթանակն ունեցել է նաև համահայկական խոշոր նշանակություն. այլևհոժել է հողազնով մեկ ցրված ողջ հայությանը, առիթ տվել խորհելու ազգային շահերի միասնականության ու ընդհանրության մասին, վերադարձրել կամքի ազատ արտահայտման ու ինքնորոշման իր անկապտելի իրավունքները պաշտպանելու հնարավորության հավատը: Շուշիի հաղթանակը համաշխարհային հասարակության համար նույնպես բացահայտել է Արցախյան հիմնահարցի նպատակների ու խնդիրների ողջ լրջությունը:

Շուշիի ազատագրման մասնակից, հերոս Դուշման Վարդանի իր տղաներին վստահեցնում էր. «Մտնելու եմ Շուշի եւ Լաչինով դուրս գամ»:

«Հարսանիք լեռներում» օպերացիայի հաղթական ելքը կոտրեց թշնամու ողնաշարը, կրկնապատկեց հայկական զինուժի ոգին: Շուշիի ազատագրմամբ, սակայն, «Հարսանիք լեռներում» գործողությունը չա-

վարտվեց: Դրան հաջորդեց Լաչինի մարդասիրական միջանցքի բացման գործողությունը, որով ճեղքվեց ԼՂՀ շրջափակման օղակը, եւ մայիսի 18-ին բացվեց Արցախը Հայաստանին միացնող կյանքի ճանապարհը: Շուշիի ազատագրումն այն բեկումն էր, որը նախ մեզ, ապա մնացյալ աշխարհին ցույց տվեց, թե ինչ ասել է պատմությունից դասեր քաղած հայ, այսինքն՝ մենք լռեցրինք եւ այսուհետ եւս, եթե հարկ լինի, կլռեցնենք բոլոր այն կրակակետերը, որտեղից կրակում են մեր խաղաղ բնակավայրերի վրա: Տարիներն ակնթարթ առ ակնթարթ հեռանում են, սակայն ժամանակի մշուշից վեր են հանում Շուշիի գործողության մշակման ու իրականացմանը մասնակցած բոլոր հերոսները, ովքեր «Հարսանիք լեռներում» առասպելը կերտեցին:

Մարտական գործողությունները ճշգրիտ հաշվարկված էին, եւ արդեն հաջորդ օրը Շուշին լիովին ազատագրված էր արդյեքանցիներից: Եվ այդուհետ՝ ամեն հայի համար Շուշի բառի առաջին եւ հիմնական իմաստը դարձել է մեկ բառ՝ ՀԱՂԹԱՆԱԿ:

Պատրաստեց Լ. Թեւոյանը

Շուշիի առանձնակի գումարտակ

Շուշիի առանձնակի գումարտակն ստեղծվել է 1992 թվականի 1-ին՝ Գետաշեն-Շահումյանի կռիվների բովոլ անցած դաշնակցական ջոկատների հենքի վրա:

«Պատերազմն այնպիսի փուլ թեւակոխեց, երբ անհրաժեշտ էր պայքարը շարունակել կանոնավոր բանակային միավորումով: Մենք մեր ջոկատներն ունեինք ամենուր, սակայն արդեն սխալ էր առանձնացված կռվելը: Մեր մարտիկները չտարանջատվելով՝ մտան բանակային համակարգի մեջ՝ կազմելով Շուշիի առանձնակի գումարտակը, քանի որ առանձին կուսակցության պատերազմ չէր սա, այլ՝ պետության, ուրեմն հարկ էր կազմակերպված պայքար մղել», - ներկայացնում է ՀՀ Գերատեսչի ՊՍ ազատամարտիկների հանձնախմբի ներկայացուցիչ Իգոր Սարգսյանը, ով 1991 թվականից մասնակցել է մարտական գործողություններին Կրկնում, Լեւոնյում, Լաչինում, Ասկերանում, եղել է Ֆիզուլու ճակատում, Մարտակերտում, Մարտունիում ու Հաղորդում, Շուշիում, եւ այդպես՝ մինչև 1994 թվականի հրադադարը:

Շուշիի առանձնակի գումարտակում կռվել է շուրջ 700 ազատամարտիկ:

Գումարտակի հերոսներից են Դուշման Վարդանը, Բեկոր Աշոտը (Աշոտ Դուլյան), Կարոտ Մկրտչյանը, Հրաչ Գասպարյանը (Ազնեվոյ), Բուժականի Մուրադը, Արթուր Ղարիբջանը...:

Շուշիի առանձնակի գումարտակը մեծ համբավ է ունեցել տարածաշրջանում իր անկարտելիությանը ու մարտունակությամբ: Սա այն գումարտակն է, որը 94-ին Ֆիզուլու ճակատում կատաղի մարտեր մղելով՝ մի սանտիմետր անգամ չի նահանջել՝ անսասան պահելով դիրքերն ու արդյեքանցիների ստիպելով դադարեցնել հուժկու գրոհը:

Այս գումարտակն է, որ հաղթել է Ղարաբաղում իրենց դեմ կռվող չեչենների ջոկատներին, նրանք թվում՝ հատաքին ու ճամիլ Բասաեւին: Այդ նրանց մասին է վերջինս վիրավոր վիճակում ասել, թե կցանկանար, որ իր զինվորներն այդպես կռվեին:

Եվ, միեւնույն ժամանակ, այդ ընթացքում Ռուսաստանի պաշտպանության նախարար Գրաչովը հայտարարել է, թե՛ եթե ինքը Շուշիի առանձնակի գումարտակի նման երկու գումարտակ ունենար, շատ կարճ ժամկետում կգրավեր Չեչնիան:

Պատերազմի տարիներին միայն կռվելով

չէին զբաղված գումարտակի զինվորները: Նրանք նաև սատարում էին Ադրբեջանից Շուշիում ապաստանած փախստականներին, օգնում բնակչությանը՝ ամբողջությամբ փրկելով վերքերը, ոտքի կանգնելու: Տարածում էին հեղափոխական, հայրենասիրական երգեր: Գումարտակի մարտիկները 15 տարեկան պատանուց մինչև ծերունիներ էին:

Ազատամարտիկները պատմում են, որ գումարտակը մի ամբողջական ընտանիք էր, իսկ կռվի հիմքում ընկած էր ոչ թե ատելությունը, այլ սերն ու նվիրումը հայրենիքին, ընկերությանը, Դաշնակցությանը:



Երեւանցի Ռուդոլֆ Հովակիմյանի խոսքերով՝ երբ իրենք մայիսի 9-ին հաղթանակած իջնում էին Շուշիից, Ստեփանակերտում ծաղիկներ էին փռում նրանց ճանապարհին:

«Այդ պահին ես հիշեցի հին ֆիլմերը Հայրենական պատերազմի մասին, երբ հաղթանակած սովետական բանակին ցնծությամբ էին դիմավորում:

Դեպի Շուշի գրոհը մայիսի 8-ին էր: 7-ի գիշերը սկսեցինք տարբեր ուղղություններով: Ես անձամբ Շուշի գյուղի կողմից, Դուշման Վարդանի հրամանատարությամբ, ժայռերի վրայով բարձրացա Շուշի: Հիմա ամեն տարի այստեղ եմ գալիս ընկերներին հետ. ո՞նց չգամ» - ասում է Ռ. Հովակիմյանը, ում ընկերները «Չայ» մականունն են տվել՝ թեյ շատ խմելու պատճառով, եւ ով Շուշիից բացի մասնակցել է Լեւոնյի, Կրկնակի մարտերին:

Ոչ պակաս հետաքրքիր կերպար է ստույգների ժառանգ, երեւանցի Յուլիան:

Նա չի կարողացել հաշտվել ոչ մեր օգտին հրադադարի հետ, ու ծանր վիրավորվելով՝ անգամ Արցախյան պատերազմի հրադադարից հետո կռվել է Վրաստանում, Չեչնիայում:

Գումարտակի մեկ այլ զինվոր՝ Պարսկաստանից եկած Հարմիկ Հովսեփյանը, կռվի ընթացքում առաջին անգամ թշնամու ուղղաթիռ կործանողն է եղել: Ասում են՝ նա դիրքերում հասակով մեկ քայլում էր խրամատների կողքով ու հետեւում, որ հանկարծ որեւէ մեկը գլուխը խրամատից վեր բարձրացնի, իսկ իր մասին, որ ամբողջ մարմնով թշնամու թիրախ է, չէր էլ մտածում:

Շիրակի մարզի Մանթաշ գյուղից Գարեգին Թորոսյանը, ով նույնպես առաջին իսկ օրերից մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը, Շուշիի, նաև ողջ Արցախի ազատագրմանը, ստացել կառավարական պարգևներ, հպարտությամբ ասում է. «Ուրախ եմ, որ մեր սերնդին բախտ է վիճակվել մասնակցել մեր հողերի ազատագրմանը: Երջանիկ եմ, որ այսօր Շուշիում եմ. 1994-ից հետո չէի եկել Շուշի: Հպարտանում եմ ընկերներովս, բոլորին ցանկանում եմ առողջություն, հաջողություն: Փառք մեր ընկած ընկերներին: Ցանկանում եմ՝ Շուշին ավելի գեղեցական, իսկ ժողովուրդն առանց պատերազմի շարունակի կյանքը»:

Գարեգինի ընկերը՝ սարատակցի Արթուր Թորոսյանը, նույնպես միանում է մաղթանքներին. «Ուրախ եմ, որ իմ սուրբ հողի վրա եմ, բոլորի հետ: Կարող եմ միմիայն հպարտանալ Արցախով: Ուրախություն ու խաղաղություն եմ մաղթում այս հողին»:

Գումարտակի մարտիկներին միմյանց կապող շատ բարձր արժեքներ կան: Նրանք բոլորը շատ տարբեր են իրարից, սակայն նման՝ իրենց անսահման հայրենասիրությամբ ու նվիրվածությամբ, անցած ճանապարհով, պարզապես՝ պարկեշտ մարդ լինելով:

Նրանց անցած ուղին փոքր-ինչ իմանալով՝ համոզվում ես, որ գումարտակի զինվորներից յուրաքանչյուրը հերոս է, իր սխրանքներով՝ կենդանի լեգենդ, ում հետ նույն ժամանակաշրջանում ապրելու պատիվն ունենք մենք:

Արցախ աշխարհի ամեն մի քարն ու թուփը ծանոթ է այս մարդկանց: Ամենուր հուշեր են, հույզեր, ծանր, միաժամանակ հաճելի զգացողություններ, միմյանց միախառնված կարոտ, հպարտություն, կորուստ ու ձեռքբերում...:

Արդար զինվոր էր Բեկոր-Աշոտը: Այսպես են հիշում նրան ընկերները՝ պատմելով, թե ինչպես է նա գրոհի ժամանակ առաջինը մտել Շուշի եւ վիրավոր գրավել Շուշիի բերդը: Այդ ընթացքում զինվորների մի մասը ժիրայր Սեֆիլյանի հրամանատարությամբ պահել է Շուշիից դուրս եկող ճանապարհը: Բերդի գրավման լուրը խանդավառել է մյուս ազատամարտիկներին, եւ նրանք ոգեւորված շարունակել են պայքարը՝ առանց կասկածելու, որ հաղթելու են:

Եվ այնքան դառնությամբ են մարտական ընկերները հիշում, որ պատերազմի բովոլ անցած, թշնամու միլիոնավոր զնդակներից չընկած Աշոտը (Բեկոր՝ «Ասկուկա» մականունը նա ստացել էր մարմնում բազմաթիվ բեկորներ ունենալու պատճառով) գոհվեց յուրայինի՝ թիկունքին ուղղված զնդակից...:

Շուշիի գրավման օրերին ՀՀ Գերատեսչի Գերագույն մարմնի նախաձեռնությամբ Հայաստանի բոլոր մարզերից գումարտակի շուրջ 130 ազատամարտիկներ այցելեցին Ղարաբաղ, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին զոհված ընկերների հիշատակին, ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեցին Շուշի մտած առաջին տանկի վրա, այցելեցին Ստեփանակերտի Հուշահամալիր, եղան Արցախի ազգային հերոս Աշոտ Դուլյանի՝ Բեկոր Աշոտի հուշարձանի մոտ եւ նրա անվան դպրոցում, խնջույքի սեղանի շուրջ անհամար հիշողություններ պատմեցին պատերազմի՝ արդեն հաճիտյան միմյանց կապող ընկերության ու երազանքների մասին:

«ԱՊՍՈՍԺ»

Առաքինի դաշնակցականը. Կամո Մարտիրոսյան



ՅՅԴ անդամ, Արցախյան շարժման ակտիվ մասնակից Կամո Մարտիրոսյան, արդեն մեկ տարի է, մեզ հետ է:

Նա այն եզակիներից է, ով երբեք չէր խոսում անցած ուղու, պատերազմի, պատերազմում ունեցած իր ավանդի մասին: Երբեմն ընկերներից էինք լսում որոշ գրույցներ, որին ի պատասխան նա ասում էր. «Խոսելու ի՞նչ իմաստ կա, ի՞նչ պարտադիր է ամեն արած-չարածի մասին խոսել»:

Զբախտ էր, եւ ինչպես իր ընկերներն են ասում՝ գործի մարդ էր, ավելորդ խոսակցություններ չէր սիրում: Խստապահանջ էր իր եւ շրջապատի նկատմամբ եթե խոսքը ընդհանուր գաղափարին, ընդհանուր գործին էր վերաբերում:

Գրեթե միշտ մերժում էր հարցրույցներ տալ՝ պատճառաբանելով, որ դեռ դրա համար ժամանակ չատ կունենա:

Ցավոք սրտի, դրա ժամանակը չունեցավ... 2014 թվականի մայիսի 7-ին նա հանկարծամահ եղավ... 54 տարեկան էր:

Կամո Մարտիրոսյանի մասին գրուցեցինք նրա համագյուղացի, մարտական ընկեր, ԼՂՀ ՊԲ կազմագործակալաբաշխի բաժնի պետ, շտաբի պետի տեղակալ, փոխգնդապետ Գրիգորի Գասպարյանի հետ:

«Մենք համագյուղացիներ ենք: Ես ավելի մտերիմ էի նրա կրտսեր եղբոր՝ Կիմայի հետ, որն իմ հասակակիցն էր: Կամոն ինձից 4 տարով մեծ էր: Կամոյի հետ ավելի մտերմացա, երբ երկրորդ կուրսի ուսանող էի: 1982 թվականին Յյուսիսային Օսիայի Օրջոնիկիձե քաղաքում էի սովորում, իսկ նա այնտեղ փորձուսուցում էր անցնում: Երբ իմացավ, որ այնտեղ եմ, եկավ ինձ տեսակցության: Կարելի է ասել՝ մեր հասուն ընկերությունն այնտեղ է սկսվել»,- պատմում է նա:

Արդեն 1980-ական թվականներին Կամո Մարտիրոսյանն ակտիվ ընդհատակյա գործունեություն էր ծավալում: Շարժման ակունքներում էր կանգնած:

«1990 թվականն էր. արձակուրդում էի: Գիտեի, որ ՅՅԴ շարքերում է: Ասաց, որ իրեն Սարդարաշեն տանեմ իմ մեքենայով: Այնտեղ նա հանդիպեց Շահբազյան Կայծերի հետ, ով այդ ծորակում ՅՅԴ-ի կողմից նշանակված էր որպես ծորակի պատասխանատու: Պատկերացրեք, ինձ՝ իր մտերիմ ընկերը, թույլ չտվեց մասնակցեմ գրույցին՝ պատճառաբանելով, որ կան հարցեր, որոնք պետք է քննարկվեն նեղ կուսակցական շրջանակներում: Որոշ ժամանակ անց ես էլ Կամոյի շնորհիվ անդամագրվեցի ՅՅԴ շարքերին»,- շարունակում է Գրիգորի Գասպարյանը:

Մինչ 1992 թվականի օգոստոս ամիսը Կամո Մարտիրոսյանը Լորագյուղի ջոկատում էր՝ որպես հրաձիգ: 1992 թվականի մայիսի 8-ին Շուշիի ազատամարտական ժամանակ Կամոյի եղբայրը՝ Կիման,

ծանր վիրավորվեց, իսկ մի քանի օր անց հիվանդանոցում մահացավ: Կամոն չէր արտահայտվում, բայց ծանր էր տանում եղբոր կորուստը...

1992 թվականի օգոստոս-սեպտեմբերին Գրիգորի Գասպարյանը նշանակվեց հետախուզության պետ, իսկ Կամո Մարտիրոսյանին տեղափոխեցին նույն գործառնական հետախուզության բաժին: Որոշ ժամանակ անց, հաշվի առնելով նրա ունակությունները, նրան նշանակեցին ինժեներային ծառայության սպա: Գ. Գասպարյանը պատմում է, որ՝ չնայած այն հանգամանքին, որ ծառայության պետը Կամոն չէր, ամբողջությամբ գործն ու պատասխանատվությունը նրա վրա էր:

«Ես կասեի, որ Ասկերանի պաշտպանական շրջանում ինժեներային ծառայության սակրավորային գործի հիմնադիրը եղել է հենց Կամո Մարտիրոսյանը: 1992 թվականի հունիսին ակադի պայթյունից զոհվեց ինժեներային ծառայության պետը, որից հետո ինժեներային ծառայությունը միայն անունով է գոյություն ունեցել»,- ասում է Գասպարյանը:

1995 թվականին ժամկետային զինծառայողներից նա սակրավորներ էր պատրաստում, նախագծում էր ականների կառուցվածքներ: Կարճ ժամանակահատվածում բավականին լավ մասնագետներ պատրաստեց, որոնք մարտական գործողությունների ժամանակ ականապատումներ էին իրականացնում:

«Կարակաշլուի ուղղությամբ թշնամին 16-18 միավոր զրահատեխնիկա էր հանել եւ լայնածավալ գրոհ էր ձեռնարկում: Մի քանի օր առաջ Կամոյի անմիջական մասնակցությամբ եւ վերահսկողությամբ այդ տարածքը ականապատվում է: Գրոհի ժամանակ մոտ 8 միավոր զրահատեխնիկա է ոչնչացվում, որից 5-ը ականների վրա են պայթում: Ամեն մեկն իրեն էր վերագրում կատարվածը, իսկ Կամոն էլ կանգնած քմծիծաղ էր տալիս»,- պատ-

մում է նա:

1992 թվականին Գրիգորին Գյումրիից մեքենայով հակատանկային եւ հակահետեակային ականներ տեղափոխեց Ղարաբաղ՝ Նորագյուղի ջոկատ:

«Կամոն ասաց՝ գիտե՛ս չէ, որ շունը սպանողն է քարը տալիս, ինչպես որ բերել էս, այնպես էլ պիտի սովորես տեղադրել: Մի քանի հոգով գնացինք ծորը, որտեղ նա սովորեցրեց ինձ ականապատման մանրուքները... Դրանք դեռ ի՞նչ են. իմ հայրենասիրության 50 տոկոսը նրանից եմ սովորել: Նա տարբերվում էր բոլորից, ծանր շուն է քաշում, ապա շարունակում, չափից դուրս խիստ էր մասնագիտական հարցերում: Ես եղել եմ նրա վերադասը, սակայն նույնիսկ իր վերադասի նկատմամբ նա խստապահանջ էր, նույնիսկ վերադասներն էին նրա հետ հաշվի նստում, կարծիք հարցնում, քաշվում շատ հարցերում: Շատերի համար նա օրինակ էր՝ որպես հայ, որպես դաշնակցական: Չպարտությամբ էր կրում դաշնակցական լինելու փաստը, եւ իր գավակներին էլ այդ ոգով է դաստիարակել...»:

Նշում է, որ որոշ հարցերի շուրջ վիճում էին, սակայն խոստովանում է, որ Կամոն ընդունակ էր ավելի հեռուն նայելուն եւ ինդիքներն ավելի խորն ընկալելուն: Եւ շատ հաճախ կարողանում էր հակառակը համոզել իրեն:

Չարցին՝ թե ի՞նչ կփոխեիք, եթե նա ողջ լիներ, պատասխանում է.

«Կամոյի կենդանության օրոք նրան որեւէ պարգևի չենք ներկայացրել: Ինձ համար դա մեծ բացթողում է: Դրա մեջ ես իմ մեղքի բաժինն էլ եմ գզում: Սակայն նա իր ապրած կյանքով մեծ անուն է թողել: Մարդ կա՝ 100 տարի է ապրում, բայց չի ապրում ըստ արժանվույն: Նա կարճ, բայց մեծ կյանքով է ապրել»,- ասում է նա:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Մարմնի տկարությունը ոչինչ է հոգու ուժի դեմ



Ամեն մի բացվող առավոտ նվեր է տրված մահկանացուներին, բայց միայն նա, ով զգացել է մահվան շունչը, գիտի կյանքի ամեն մի օրվա արժեքը...

Ստեփանյանների ընտանիքում հայրենասիրությունը ժառանգաբար փոխանցված գիծ է: Ընտանիքի հայրը՝ Վանիկը, Արցախյան գոյապայքարի մասնակիցն է: Ծառայել է «Սասունցի Դավիթ» ջոկատում, եւ իր մարտական ընկերոջ՝ Արկարի Տեր-Թադևոսյանի հետ երկար մարտական ուղի

է անցել: Որդին՝ Սարգիսը, անհանգիստ ու պրպտող բնավորությամբ չէր կարող կյանքի հանգիստ ճանապարհ ընտրել: Նրան ճանաչողները բնական են համարում, որ ժամկետային զինվորական ծառայությունից հետո մնաց ՉՈՒ շարքերում: Պայքարելու ու հաղթելու կամքը նրա մոտ դաստիարակել է սպորտը: Ծանր ատլետիկայի սպորտի վարպետ է, ծանրամարտի Յայաստանի առաջնության չեմպիոն ու համաբանակային խաղերի ռեկորդակիր: «Սպորտն ինձ տվել է ուժ, եռանդ, ամենակարեւորը՝ հոգու ուժ, պայքարելու եւ հաղթելու, միշտ առաջինը լինելու ունակություն»,- ասում է Սարգիսը:

Բնավորության հենց այս գծերի շնորհիվ էլ նա կարողացավ դիմակայել ու հաղթահարել կյանքի այն փորձությունները, որոնք շատ-շատերին կարող էին ընկճել ու թեւաթափ անել: Անցած տարվա հուլիս-օգոստոս ամիսներն էին՝ թշնամու աննախադեպ ակտիվության շրջանը: Արբեջանական հերթական դիվերսիոն ներթափանցման փորձը հետ մղելիս մեր տղաներից մեկը չեզոք գոտում թշնամուն հետապնդելիս վիրավորվեց: ՊԲ հատուկ նշանակության ջոկատի հրահանգիչ, կապիտան Սարգիս Ստեփանյանը հրաման ստացավ՝ իր ջոկատի հետ չեզոք

գոտուց դուրս բերելու վիրավորին: «Չասկանալով, որ տարածքն ականապատված է, եւ գիտակցելով, որ պետք է հնարավորինս շուտ հասնել վիրավորին՝ փորձեցի ավելի արագ գործել: Տարածքը ականազերծելով՝ մոտեցա նրան»,- հիշում է ՉՈՒ սպան:

Վիրավոր ընկերոջից նրան բաժանում էր ընդամենը երկու մետր, երբ պայթում է ականը:

«Պայթյունի ալիքը օդ բարձացրեց ինձ, եւ կանգնելու կամ առաջ շարժվելու փորձերս չհաջողվեցին»,- պատմում է Սարգիսը:

«Երկու մետրի վրա պայթեց ականը: Չասկացանք, որ մեր խնդիրն ավելի բարդացավ: Յիմա պիտի օգնեիք երկուսին ու դուրս բերեիք նրանց անվտանգ տարածք»,- պատմում է Սարգիս ընկերը:

Ձուկատը կատարում է առաջադրանքը: Երկու վիրավոր ընկերներին դուրս են բերում թշնամու երախից ու հասցնում զինվորական հոսպիտալ:

«Երբ վիրահատությունից հետո ուշքի եկա, առաջինը ստուգեցի՝ ոտքերս տե՞ղն են արդյոք»:

Իսկ ոտքերը չկային... Չկար նաեւ աջ ձեռքը:

«Երբեք չեմ զղջացել կատարածիս համար: Ծիշտ է՝ հիմա կորցրել եմ ոտքերս ու աջ ձեռքս, բայց եթե Աստուծո հրաշքով վերա-

կանգնվեք առողջությունս եւ առավոտյան հրամանատարս հրաման տար նման խնդիր կատարելու՝ ես դարձյալ կգնայի այդ քայլին»,- վճռականությամբ ասում է նա:

Նրա ակտիվ կյանքն անցյալում չի մնա: Նա ունի կամքի ուժ ու վճռականություն՝ կյանքը լիարժեք շարունակելու համար: Նա շարունակում է իր ծառայությունը ՉՈՒ շարքերում՝ իր փորձն ու գիտելիքները փոխանցելով եկող սերնդին: Նաեւ մարզադահլիճ է հաճախում, բազկամարտով է զբաղվում, ընդ որում՝ ոչ սիրողական: Նպատակ ունի այդ բնագավառում էլ լուրջ արդյունքների հասնել: Մտադիր է նաեւ օդապարիկային թռիչք կատարել Մեւանի վրա:

Սարգիսն ընդհանրապես կատարել է օդապարիկային 113 թռիչք, որոնց մեծ մասը՝ ազատ անկումով: Առհասարակ, ցանկացած խնդիր, ցանկացած առաջադրանք կատարելիս միշտ ձգտում է հնարավորինս անթերի:

Այսպիսին է Սարգիսը՝ համեստ ու հպարտ: Նա կենդանի ապացույցն է հայի անկոտրուն կամքի: Մարմնի տկարությունը ոչինչ է ոգու ուժի դեմ: Ի վերջո, մարդուն ապրեցնողը ոտքերն ու ձեռքերը չեն, այլ նպատակներն ու արժեքները, որոնց համար պատրաստ է պայքարել՝ չխնայելով կյանքը:

Յուլյա ՎԱՆՅԱՆ

Անկեղծ հերոսը՝ Պողոս Խամոյան



ակնածանքի: Երանք իրավունք չունեն այս հողի վրա մոռացված ապրելու, որովհետև Երանք են այս հողի իրական տերերը...

Պողոս Խամոյանի հետ ծանոթացա շատ պատահական, բայց Երանք կերպարին ու գործին չանդրադառնալ չեմ կարող, թեև ևս ամեն գնով խուսափում էր հարցերից: Այդուհանդերձ, ևս գրույցի ժամանակ անկեղծացավ՝ պատմելով իր անցած ուղու եւ ներկայի մասին:

Պողոս Խամոյանը ծնվել է 1961-ին, Թալինի շրջանի Դավթաշեն գյուղում: Նախնիները գաղթել են Արեւմտյան Հայաստանի Սասնա գավառից: Հայրենիքի հանդեպ սերը փոխանցվել է արմատներով՝ որպես ժառանգություն: Ու պատահական չէ, որ Արցախյան պատերազմի օրերին Պողոսը եղավ այն առաջիններից, որ գինվորագրվեց Արցախի պաշտպանությանը:

«Լինելով գաղթական սասունցու թո՞ւ՝ ես չէի կարող այլ կերպ վարվել, չէի կարող պայերիս վրեժը չլուծել մեր դարավոր թշնամուց: Դա այն պարտքն էր, որը պարտավոր է կատարել ամեն մի հայ, մանավանդ Ցեղասպանություն տեսածների ժառանգները, -ասում է Պողոսը:

- Պապս պատմում էր, որ Սասունի ջարդերի ժամանակ այն գյուղը, որը գեներ է վերցրել ու պայքարել, մասամբ փրկվել է ջարդերից, իսկ ովքեր հլու-հնազանդ հանձնվել են թշնամուն, դաժանաբար կոտորվել են...Ուրեմն՝ թշնամուն իր որջում պետք է ոչնչացնել. չպետք է թողնել, որ ևս քո տուն հասնի...»,- պատմում է Պողոսը:

Սասունցու ոգին Պողոսին բերեց Արցախ...Չէր կարելի թույլ տալ, որ հայը նորից ցեղասպանություն ապրեր...

Մինչ Արցախ գալը՝ Պողոսը մասնակցեց Լաւե Հայաստանի սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին՝ Նոյեմբերյանում, Իջեւանում, հետո՝ Գորիսում, իսկ 1992-ին արդեն Արցախում էր՝ սկզբում Մաճկալաշենում, ապա 1992 սեպտեմբերից՝ Շուշիի առանձնակի գումարտակի կազմում:

Մասնակցել է Մարտակերտի գյուղերի, Մարտակերտ քաղաքի, Աղդամի, Ֆիզուլիի, Չանգեյանի, Կուբաթլուի եւ շատ այլ մարտերի:

«Շուշիի ազատագրման իմ մասնակցությունն ուղղակի չի եղել,- պատմում է ևս,- ես այդ օրերին եղել եմ Ամարասի ծորակի՝ Մաճկալաշենի պաշտպանական դիրքերում: Մեր խնդիրն է եղել՝ թույլ չտալ, որ հակառակորդն այդ ուղղությամբ գործողություններ ձեռնարկի... Բայց, երբ հեռակապով իմացանք,որ Շուշին արդեն ազատագրված է, շտապեցինք Ամարաս վանք, որը գտնվում էր մեր եւ ազերների դիրքերի միջև: Մենք հնչեցրինք հիւսավորք Ամարասի գանգերը: Ես ու ընկերս՝ Համիկը, ամեն գիշեր, ժամը ուղիղ 12:00-ին հնչեցնում էինք վանքի գանգերը, իսկ կատաղած ազերներն ամբողջ մեկ ժամ գնդակոծում ու ռմբակոծում էին մեր դիրքերը եւ վանքի հարակից տարածքները...Ամարասի գանգերը մեր հաղթանակի կոչնակներն էին...»:

1993 թվականին Պողոս Խամոյանն անդամագրվեց ՀՀ Դաշնակցությանը: Այս որոշման մասին ևս ասում է. «Իմ կարծիքով՝ ամեն մի հայ պետք է լինի հեղափոխական, այսինքն՝ կողմ լինի, ևպաստի իր երկրում առկա թերությունների արմատական վերացմանը, ամեն դեպքում գորավիզ լինի իր ազգային շահերին, գործի՝ ի նպաստ ազգային գաղափարի...Դա է որդեգրել ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ արդեն 124 տարի, եւ դրան հասնելու համար մենք պետք է ունենանք ներքին համերաշխություն, միասնություն: Երկրվալ կուսակցական են 1993-ից, բայց ներքուստ որդեգրել են իմ մեծ պայքի եղբոր, հորդեգոր, հայրիկիս քեռու բռնած ուղին, ովքեր ստալինյան ռեպրեսիայի զոհերից են եղել...»:

1994 թվականի հունվարին ազերների ահեղ հակազորների ժամանակ Պողոսը Ֆիզուլու Կարախամբեյլի գյուղի պաշտպանական գծում ստանում է վնասվածք, որի հետևանքները մինչ օրս ուղեկցում են նրան: Արդեն թվով վեցերորդ վիրահատությունն է տանում՝ կոնքագրի էնթոպրոտեզավորում: Ունի հաշմանդամության երկրորդ կարգ: Մշտական աշխատանք չունի, եւ հանապազօրյա հացը վաստակում է անձնական օգտագործման ժողովի մակնիշի մեքենայով երբեմն /գործ եղած ժամանակ/ տաքսի վարելով: Ապրում է հայրենի գյուղում՝ Դավթաշենում:

«Այսօր ես, որպես ազատամարտիկ, ցավ եմ ապրում՝ տեսելով դատարկվող Հայաստանը: 1992-ին, երբ առաջին անգամ ոտք

դրեցի Արցախ, մարդկանց աչքերում հույս ու հավատ էի տեսնում: Այդ դաժան օրերին մարդիկ ավելի վստահ ու համարձակ էին: Հիշում եմ՝ Մաճկալաշենում, չնայած ռմբակոծություններին ու կրակոցներին, փողոցներում ամենուր երեխաներ էին խաղում՝ արհամարելով պատերազմը, որովհետև այդ ժամանակ բոլորն էին վստահ, որ հաղթանակը չի ուշանալու: Այդ օրերին 100-ից ավելի երեխաներ էին սովորում գյուղի դպրոցում: Այսօր կուզեի տեսնել 90-ականների արցախցուն, ով ինքնավստահ էր, անպարտելի...Ապշում եմ այն հերոսներից, ովքեր պատերազմի օրերին հրացաններով դուրս էին եկել թշնամու տանկերի դեմ, իսկ այսօր վախենում են իրենց արդարացի պահանջները ներկայացնել՝ իրենց իսկ կերտած անկախ հայրենիքը նորից պաշտպանելու, արդարությունը վերականգնելու... Ցավ եմ ապրում, երբ օր-օրի ստեղծվում են տարբեր կուսակցություններ, ազատամարտիկներին գատող, ազգը մասնատող տարբեր միություններ, հասարակական ինչ-որ մուլթ կազմակերպություններ... Եւ այդ ամենը մեր երկրի ոչ ազգայնական դեկավարության հովանու ներքո է լինում: Պատմությունից մեզ հայտնի է, երբ հայը պետականորեն առավելությունների ու հաջողությունների է հասնել, դրան զուգահեռ ունեցել ենք մեր թագավորների եւ իշխանների անհամերաշխությունը, ներքին դավադրությունները, ոչ ճիշտ պետական քաղաքականության ընտրությունը, որ միշտ տարել է դեպի անկում...»,- խոր ցավով նշում է ազատամարտիկը եւ հայտնում իր մեծ փափագի մասին. «Կուզեի, որ ոչ մի հայ չլիք իր հայրենիքը, որ հայն արժանավայել ապրի իր հայրենիքում, որ հայրենիքը լինի ոչ թե առանձին անձերի սեփականությունը, այլ՝ բոլորինը: Կուզեի, որ ամեն մի հայ՝ լինի բժիշկ, ուսուցիչ, ևս-խարար, թե ևսխազա, մտածի մեր տարած հաղթանակների եւ այսօրվա մեր խաթարված հավատի համար», - ևս ժպտում է խորիմաստ ու հիշում Նժդեհյան խոսքերը. «Վա՛յ այն գինվորին ու զորքին, որն իր դեկավարների աչքերի մեջ բոց, շարժումների մեջ վճռականություն, սրի ծայրին շանթ չի տեսնում: Դատապարտված է ևս... Ցավ եմ ապրում, որ երեկվա հերոսն այսօր դառնել է կամակատար մի խամաճիկ...»:

Դերմինե ՍԿՍՏՅԱՆ

Եւ անցել է Մեծ հայրենականի բովով



Հայրենական մեծ պատերազմից անցել է 70 տարի: Հայրենական պատերազմի հերոսներից շատերը բռնել են հավերժության ճամփան, բայց նրանցից ոմանք դեռ ապրում են մեր կողքին՝ հիշեցնելով իրենց անցած ուղու եւ սխրանքների մասին: Հայրենական մեծ պատերազմին իրենց ներդրումն են ունեցել հազարավոր արցախցիների՝ ծառայելով Կարմիր բանակի տարբեր զորամասերում, հետեւակում, գրահատակային զորքերում, օդային նավատորմում, հրետանիում, ռազմածովային նավատորմում, սահմանապահ զորքերում:

Հայրենական պատերազմի մասնակիցներից մեկն է Մեսրոպ Իսրայելի Պողոսյանը:

Մեսրոպ Պողոսյանը ծնվել է 1920թ. մայիսի 9-ին Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, սովորել տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո, 1939թ. անցել է գինվորական ծառայության Բեսարաբի քաղաքում:

aparaj.am-ի հետ գրույցում Մեսրոպ պապը պատմում է, որ սովետական բանակում ծառայելու տարիներին շրջապատված է եղել հայերով. «Միայն մեր գյուղից զորամասում ինձ հետ ծառայում էին 4 տղաներ», - ասում է ևս:

«1941թ. սկսվել է պատերազմը: Մենք՝ հայերս, առաջին իսկ օրվանից մասնակցել ենք պատերազմին՝ միշտ կանգնած լինելով թշնամու դեմ կռվի առաջին գծում, - ասում է Մ. Պողոսյանը եւ շարունակում,-

1941թ. օգոստոսի 10-ից մինչեւ հոկտեմբեր 16-ը Օդեսա քաղաքի պաշտպանության ժամանակ մենք հասկանում էինք, որ լինելու են թե՛ մարտեր, բայց չէինք ընկրկում, բոլորս գիտեինք՝ հրամանը պետք է կատարվի: Ցավոք, Օդեսայի պաշտպանության մարտերում ես ծանր վիրավորվեցի եւ ինձ տեղափոխեցին Թբիլիսիի հոսպիտալ»:

Ապաքինվելուց հետո՝ 1941թ. դեկտեմբերին Մ. Պողոսյանը դուրս է գրվում հոսպիտալից եւ ընդունվում Թբիլիսիի հրետանային վարժարան: Վարժարանն ավարտելուց հետո մասնակցում է Գրոզնիի, Կրասնոդարի, Ստավրոպոլի, Նովորոսիյսկի, Տյումենի, Դնեպրոպետրովսկի, Խարկովի եւ Կիեւի պաշտպանությանը: Այս ընթացքում ևս ստանում է գլխի ծանր վիրավորում եւ տեղափոխվում է հոսպիտալ:

«Պատերազմի տարիներին եղել եմ ևս եւ գնդացրորդ,- նշում է ևս,- առաջածորի գինվորի հետ գումարտակը պաշտպանելով՝ այնքան ենք կրակել հետախուզության փորձ կատարող թշնամու վրա, որ թշնամուն հետ մղելուց հետո նկատել ենք, որ

վերջացրել ենք 2 գնդացիր ժապավեն», - ասում է Մեսրոպ պապիկը:

Պատերազմի ավարտից հետո ևս վերադառնում է հայրենի տուն, ամուսնանում, ունենում 4 զավակ: Եղել է գյուղտնտեսի ևսխազա, ֆերմայի վարիչ: Սիրել է աշխատանքն ու նվիրվել աշխատանքին:

«Այսօր ունեմ 45 թո՞ւ եւ ծո՞ւ: Երանք իմ հարստությունն են,- հպարտությամբ ասում է ևս ու ավելացնում,- զավակներս գինվորական կրթություն են ստացել եւ աշխատում են այդ ոլորտում: Չինվորական լինելը պատվաբեր գործ է»:

Արցախյան ազատամարտի մասին Մեսրոպ պապն ասում է. «Մեր որդիները շարունակեցին մեր գործը: Երանք իրենց արյամբ կերտեցին Շուշիի հաղթանակը, Արցախյան պատերազմի հաղթանակը: Արցախի պաշտպանությունն անխուսափելի էր ու կարելու: Ես երախտագիտությամբ գրվիս եմ խոնարհում մեր բոլոր այն քաջերի հիշատակի առջև, ովքեր կյանքով վճարեցին մեր խաղաղության գինը,- ասում է ևս ու խոնարհում ճերմակ գլուխը,- փա՛ռք մեր հերոսներին»:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

«Թուրքիան պետք է ճանաչի եւ հատուցի». բանաձեւ IUSY-ի խորհրդատուների կողմից

Օրերս Հայաստանում տեղի ունեցած՝ աշխարհի մեծագույն երիտասարդական, քաղաքական կազմակերպության՝ Ընկերվարական (սոցիալիստ) երիտասարդների միջազգային միության (IUSY) համաշխարհային խորհրդի ժողովը ընդունեց բանաձեւ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ»:

ՀՀԴ երիտասարդական կողմից ներկայացված բանաձեւի քննարկումն անցավ ակտիվ մթնոլորտում:

Հատկապես ուշագրավ էր Գերմանիայի ընկերվարական կուսակցության երիտասարդականի ներկայացուցչի ելույթը: Ըստ նրա՝ Գերմանիան ոչ միայն պետք է ընդունի Հայոց ցեղասպանությունը, որն արդեն իսկ ընդունել է, այլև Թուրքիայի հետ միասին կրի պատասխանատվության իր բաժինը:

Այնուհետև պատվիրակները միաձայն ընդունեցին ՀՀԴ երիտասարդականի կողմից ներկայացված բանաձեւը: Այն իր տեսակի մեջ եզակի է այն առումով, որ միջազգային երիտասարդական-քաղաքական մակարդակում նման կշիռ եւ ընդգրկում ունեցող կազմակերպությունը Հայոց ցեղասպանության ճանաչմանը եւ դատապարտմանը զուգահեռ՝ պահանջում է թուրքական կառավարությունից՝ անհապաղ ձեռնարկել միջոցառումներ ցեղասպանության հետեւանքների հատուցման համար:

Ստորև ներկայացվում է վերոհիշյալ բանաձեւը.

Բանաձեւ Հայոց ցեղասպանության 100 ամյա տարելիցի վերաբերյալ

Ընկերվարական (սոցիալիստ) երիտասարդների միջազգային միությունը (IUSY), լինելով հավատարիմ հետեւորդ արդարության սկզբունքներին, ժողովրդավարությանը, հավասարությանն ու մարդու իրավունքներին, վերահաստատում է իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ հաշվի առնե-

թյունների համար:

Միջազգային իրավունքի համաձայն՝ ցեղասպանությունը հանցագործություն է եւ հակառակ՝ ԸԵՄՄ-ի ոգուն եւ նպատակներին:

Հետեւաբար՝

ԸԵՄՄ-ն դատապարտում է հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունների համար:

ավերվել է: Փոքր թվով հայեր, ովքեր ողջ մնացին, սփռվեցին ամբողջ աշխարհով մեկ:

ԸԵՄՄ-ն խստորեն դատապարտում է թուրքական կառավարության ժխտողականությունը, եւ բոլոր այն փորձերը՝ ուղղված՝ լռեցնելու եւ կաշառելու ցանկացած նախաձեռնություն, որոնք տարվում են Հայոց ցեղասպանության ճանաչման եւ հատուցման դեմ: ԸԵՄՄ-ն հավատում է, որ ցեղասպանության ժխտումը կրկնակի հանցագործություն է, որը պետք է պատժվի:

ԸԵՄՄ-ն աջակցում է ՀՀԴ երիտասարդականին եւ հայ ժողովրդին՝ կոչ անելով Թուրքիային սկսել անհապաղ գործընթացներ հետեւանքների վերացման համար, ինչպես նաեւ կազմակերպել գործընթաց հայ ժողովրդի իրավունքների վերականգնման համար: ԸԵՄՄ-ն հավատում է, որ սա միակ հուսալի ճանապարհն է երկու երկրների եւ ժողովուրդների հաշտեցման համար:

ԸԵՄՄ-ն կրթությունը դիտում է որպես էական եւ կառուցողական միջոց ցանկացած ծայրահեղության դեմ պայքարելու համար: Այսպիսով, մենք կոչ ենք անում մեր անդամ կազմակերպություններին՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ տանել, քանի որ միայն տեղեկացնելով անցյալի ցեղասպանությունների մասին եւ դրանք դատապարտելով՝ կարող ենք կանխել նորերի իրականացումը:

Սեփ. ԼՐՏԱՎՈՒԹՅՈՒՆ



INTERNATIONAL UNION OF SOCIALIST YOUTH

լով այն, որ այս տարի աշխարհում հիշատակվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության 100-րդ տարելիցը:

Հայոց ցեղասպանությունը մի շարք այլ ցեղասպանությունների նախադեպը դարձավ, քանի որ դարասկզբի առաջին ցեղասպանությունն անպատժելի մնաց: Հայոց ցեղասպանության ընթացքում կիրառված միջոցներն ու ձեւերը օրինակ դարձան նաեւ հետագա ցեղասպանու-

թյունները, որը նախատեսվել է իրականացվել է Օսմանյան կայսրության եւ թուրքական տարբեր իշխանությունների կողմից՝ 1915-1923 թվականներին: Այս տարիների ընթացքում ավելի քան 1.5 մլն հայեր, որոնք ապրում էին իրենց նախնիների հայրենիքում (որն այսօր հայտնի է՝ որպես Արեւելյան Թուրքիա) դաժանորեն ոչնչացվել են, իսկ ժառանգությունն առգրավել կամ հիմնականում

Հայապաշտ ու հայրենասեր ռազմիկը



Ափսոս, որ նրա ու նրա նմանների մասին ստիպված ենք խոսել անցյալ ժամանակով:

Բարձրահասակ էր, լայնաթիկունք: Հորն էր քաշել, ավելի շատ՝ պապին՝ Ղարիբին: Ովքեր տեսել են, լավ գիտեն, թե վերջինս ինչ ուժի տեր մարդ էր: Առաջվա հինգ կուպեկանոցը դնում էր երկու մատի արանքում, հուպ տալիս ու ծռում: Վահրամն էլ այս ուժն ուներ, թեւ տակավին չափել էր, 19-20 տարեկան: Չարմանալի չէ, որ մարտական ընկերների շրջանում նա «Ղարաբաղի վագր» անունն էր ստացել:

Հիրավի, առասպելական ուժի տեր էր, բայց ամենեւին չէր պարծենում, ամենուր իրեն շատ համեստ էր պահում ու հատկապես խոսում: Բարի էր շատ, ուղղամիտ, պարզ ու անմիջական: Միջնակարգն արծաթե մեդալով ավարտել էր ուսումը շարունակում էր Երեւանի ժողտնտեսության ինստիտուտի «շուկայագիտություն» ֆակուլտետում: Ու ինչքան էր կարող... Սա էլ, երեւի, մորից էր գալիս: Ծնողների

առաջնեկն էր, նրանց առաջին ուրախությունը, ամենամեծ հարստությունը: Ու մանկավարժ ծնողները՝ Լենսերն ու Չինան, որ հիմա ապրում են Մասիսում, մեծ հույսեր էին կապում նրա հետ:

Ափսոս, որ նա չտեսավ Արցախ աշխարհի հաղթանակը: Ինչքան է ցավալի, որ նա կռվեց, մաքառեց, դիմակայեց, այնքան երկա՛ր-երկա՛ր քայլեց կյանքի ու մահվան ճանապարհով, բայց չհասցրեց մինչեւ վերջ մնալ մարտական դիրքում, մարտական ընկերների ջոկատում:

Ընկավ 1993-ի մարտի 31-ին, երբ իրենց գունդը՝ մահապարտների գունդը, մարտնչում էր Զարվաճառի համար: Ընկավ՝ գեներ ձեռքին, հայացքը՝ երկնքի կապույտին, ուշքն ու միտքը՝ հայրենի Մեծ Թաղերին, Իշխանագետին, գյուղի դեմ-դիմաց հպարտորեն վեր խոյացած ու դարերի փոշուն, փորձություններին դիմացած Վանքին:

1991-ին նա Աշոտ Ղուկասի կողքին էր ու թիվ 1 դեսանտ-գրոհային վաշտում կռվում էր նրան հավասար: Ամբողջ վաշտի ու հատկապես նրա հրամանատար Բեկորի կողմից ճանաչված, հարգված զինվորներից էր նա, ամուր կամքի տեր, հայապաշտ ու հայրենասեր:

Մասնակցել է բազում դաժան մարտերի, քանի՛-քանի՛ անգամ վիրավորվել, բայց ամեն անգամ լրիվ բուժվելու համար «ժամանակ չի գտել», ամեն անգամ բուժումը կիսատ է թողել ու աճապարել այնտեղ, ուր լսվում էր արկերի ու ականների որոտ, ուր ամեն քայլափոխի արյուն էր ու մահ:

Ասկերան, Դրմբոն, Մարտակերտ, Շուշ-

ի, Զարվաճառ... Այս վայրերը քաջ ծանոթ էին նրան: Այս ու էլի ուրիշ վայրերում նա շատ անգամ է աներկյուղ նայել մահվան աչքերին, այս վայրերում նա քաջի նման կռվել, վերքերի պատճառած ցավից մեկմեկ ծանր հոգոց է հանել, բայց գեներ ցած չի դրել, առաջ է նայել, արիության դասեր տվել:

Պատմում են, որ նա շատերի կյանքն է փրկել, պատմում են նաեւ, որ մեծ ռիսկի դիմելով, նա գնդակների տարափի տակ սողեցող հասել ու կռվի դաշտից հանել է գոհված ընկերոջ՝ Սեյրանի դիակը:

Ականատեսները հերոսական ուրիշ դրվագներ են պատմում նրա կյանքից: Չմոռանանք ասել, որ 92-ին առաջիններից մեկն է ոտք դրել պատմական Շուշի՝ Աշոտ Ղուկասի (Բեկոր) հետ, գումարտակի անձնագրի տղաների հետ: Չմոռանանք ասել նաեւ, որ այն ծանր, դժվարին օրերին, երբ Մարտակերտի մի շարք գյուղեր հայաթափվել, ավերի ու ավարի էին մատնվել, Վահրամը հավատով ու ուժերի անմասնորոշ նվիրումով կռիվ էր մղում կանգուն մնացած գյուղերը պահելու, պաշտպանելու, ծուխը մարած օջախներին շունչ ու կենդանություն տալու համար:

1993-ին նա դարձավ ծննդավայրի՝ Մեծ Թաղերի ինքնապաշտպանական վաշտի թիվ 1 դասակի հրամանատարը: Ու սա՛ Հայրուրթի ինքնապաշտպանական ուժերի գլխավոր շտաբի հրամանատարության խնդրանքով ու առաջարկությամբ:

Ի դեպ, նա արդեն ավագ լեյտենանտի կոչում ուներ, բավականին ճանաչված անուն ու հեղինակություն: Ու նրան դեռ շատ ավելի բարձր կոչումներ էին սպասում: Նրան վստահում, շատ հարցերում նրա հետ հաշվի էին նստում, բայց, ավաղ, 93-ի գարնան առաջին ամսվա վերջին-վեր-

ջին օրը, երբ գորավար Ավոյի հրամանատարությամբ ավելի քան 200 ազատամարտիկների հետ մարտնչում էր Զարվաճառի մատույցներում համառորեն դիմադրող թուրք սակայրների դիրքերը ոչնչացնելու համար, ծանր վիրավորվեց: Չնայած բժիշկների բոլոր ջանքերին՝ Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում ավանդեց հոգին: Ավանդեց հոգին, երբ ընդամենը քսանմեկ տարեկան էր:

Վահրամ Բաբայանը իսկական զինվոր էր: Չինվոր էր իր ամբողջ եղբայրը: Հայրենիքի, հայրենի եզերքի նկատմամբ ունեցած նրա սերը անսահման էր, անկեղծ, աստվածային: Թվում է՝ հենց նրա ու նրա նմանների մասին են ասված մեծ գորավարի՝ Նապոլեոն Բոնապարտի բառերը. «Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է»:

Վահրամն ուներ այս մեծ սերը, այս անուրանալի արժանիքը: Ու, բնական է, հայրենիքը չի մոռացել նրան: Եվ չի մոռանա: Տարիներ ու դարեր շարունակ:

Մասիսի թիվ 2 դպրոցի դասարաններից մեկը, որտեղ նա նստել, գիրք է բացել ու դաս պատմել, կոչվում է նրա անունով: Իսկ Մեծ Թաղերում, ուր նա անցկացրել է իր մանկությունն ու պատանեկությունը, նրան ամեն օր հիշում են: Հիշում են անհուն սիրով ու կարոտով, ցավով ու ափսոսանքով:

Այո՛, նրանով պարծենալու, նրանով հպարտանալու իրավունք ունենք, քանզի նա՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ Վահրամը, Արցախ աշխարհի արժանի զավակն է: Ասել է թե՛ նա ամեն մի հայի, մեր ողջ ազգի պարծանքն է:

Նրա մասին լեգենդար Ավոն ասել է. «Նժդեհական ոգով այս հայրուկը հայոց ազգի պարծանքն է...»:

Միքայել ԲԱԼՅԱՆ

100 տարի առաջ Դրոն վրեժխնդիր եղավ Բաքվի հայության ջարդերի կազմակերպիչ Նակաշիճեից



1905 թվականի մայիսի 11-ին, 110 տարի առաջ Անդրկովկասի նավթային մայրաքաղաք Բաքվի կենտրոնական հրապարակներից Պարապետի վրա 21-ամյա մի հայ հեղափոխական ռումբի մի հարվածով ահաբեկեց նահանգապետ իշխան Նակաշիճեին: Երիտասարդ այդ հեղափոխականը Դրաստամատ Կանայան էր՝ անգուգական Դրոն, որ այդպես, օրը ցերեկով եւ բանուկ մի հրապարակի վրա գործադրեց Բաքվի 337 Ոսկանապատի Կենտրոնական կոմիտեի տված մահապատժի որոշումը հարյուրավոր անմեղ հայերի կոտորածը հրահրած Բաքվի նահանգապետի դեմ:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման եւ, ընդհանրապես, համառուսական հեղափոխական խմորումների պատմության ամենից ուշագրավ եւ ուսանելի էջերից է Նակաշիճեի ահաբեկումը: Նաեւ՝ այսօրվա համար նշանակալի դասեր փոխանցող մի դրվագ է, որ մեկից ավելի գուգահեռներով լույս է սփռում հայ եւ ադրբեջանական մերօրյա հակադրության արմատների վրա: Ո՞վ էր Նակաշիճեն, ի՞նչ էր արել, որ արժանացավ նման դաժան դատաստանի: Ինչո՞ւ Բաքուն թատերաբեմ հանդիսացավ հայկական հեղափոխության այդօրինակ հարվածի համար:

Բաքուն 19-րդ դարավերջին դարձել էր ոչ միայն Անդրկովկասի, այլեւ ամբողջ Ցարական Կայսրության նավթային կենտրոնն ու ամենից ճարտարվեստական քաղաքը, ուր անխնա մրցակցության մեջ էին ռուսական եւ անգլիական, հայ եւ թաթարական դրամագլուխներն ու գործատերերը: Իսկ 1900-ականների սկզբներին Բաքուն դարձել էր գլխավոր խառնարանը համառուսական առաջին հեղափոխությամբ թափ առած արյունալի խմորումների համար: Ցարական Ռուսաստանն արտաքին ճակատի վրա, հեռավոր արեւելքում պատերազմ էր մղում ճապոնիայի դեմ, իսկ ներքին ճակատի վրա դիմագրավում էր Ս. Պետերբուրգից սկսած եւ կայսրության ողջ տարածքն ալեկոծած ընկերային հեղափոխության բուռն պայթյունը:

Հատկապես Անդրկովկասը հեղափոխական ալեկոծման մեջ էր եւ հեղափոխական տարրերը, առանց ազգային խտրության, միասնաբար ծառայած էին ցարական բռնատիրության դեմ: Բազմազգ մի մեծ խառնարան էր Անդրկովկասը, հատկապես նավթահորերով հարուստ Բաքուն, ուր հայն ու ռուսը, վրացին եւ թաթարը սուր մրցապայքարի մեջ էին իրար հետ՝ ազգամիջյան հարաբերությունների ճակատի վրա: Իսկ մյուս կողմից՝ ընկերային չարաշահումների եւ կեղեքումների դեմ ընդվզման ու պայքարի ճակատի վրա, տարբեր ազգերի հեղափոխական երիտասարդությունը միացյալ ուժերով ծառայած էր ցարիզմի կայսերապետական ճնշման գործիքների՝ խավարամիտ ու հետադիմական տարրերի դեմ:

Համառուսական հեղափոխության ալիքը հասկանալիորեն լայն արձագանք էր գտել Բաքվի աշխատավորների մեջ եւ ի մի էր բերել դրանք՝ անկախ նավթահորերի կամ ճարտարվեստական մարզի բանվորների ազգային պատկանելությունից: Ի տես հեղափոխական խմորումների այդօրինակ սաստկացմանն ու ծավալմանը՝ ցարական իշխանություններն ամեն կարգի դավ ու սադրանք էին որոճում՝ հակակշռելու համար հեղափոխության վարակիչ ալիքը:

Պատմաքաղաքական այս ենթահողի վրա, խռովահույզ Բաքվի նահանգապետի իր դիրքից՝ թաթարական ծագումով Նակաշիճեն ձեռնամուխ եղավ հեղափոխական խմորումների հենարանը հանդիսացող Բաքվի աշխատավորությանը ազգային հողի վրա պառակտելու եւ ջլատելու դավադրությանը: Իսկ նման սադրանքի հաջողության համար պատրաստի հող էր թուրք-թաթար զանգվածը՝ իր մեծաթիվ բանվորությամբ հանդերձ, որ տակավին գալարվում էր խավարամտության ու կրոնամոլության ճիրաններում: Մանավանդ որ՝ ինչպես Օսմանյան կայսրության մեջ, նույնպես եւ Ցարական կայսրության հովանու տակ հրահրված էր թաթարների (ի դեպ՝ նաեւ վրացիների) ամբոխային այն տրամաբանությունը, թե իբր հայերը, սակավաթիվ լինելով հանդերձ, թե՛ մեծ կշիռ ունեին մեծահարուստների վերնախավի մեջ, թե՛ բարեկեցիկ կյանք էին ապահովել իրենց բանվորներին...

Նահանգապետ Նակաշիճեն առավելագույն նենգամտությամբ յուր թափեց հայ-թաթարական հակադրությունների ու թշնամանքի այդ կայծերի վրա՝ նաեւ գաղտնաբար զինելով թաթար ազգայնամոլ խմբավորումներին: Ցարական իշխանությունների կողմից զինված այդ վարձկանների գլխավորությամբ էլ 1905թ. փետրվարի 6-ին Բաքվի տարբեր շրջաններում թաթար խուժանը հարձակվեց հայերի եւ նրանց խանութների ու հաստատությունների վրա՝

քանդելով, կողոպտելով եւ սպանելով... Թուրք-թաթար ամբոխի կատաղությունը շարունակվեց երեք օր, հակառակ որի՝ առաջին օրն անակնկալի եկած հայությունը շատ արագ ինքնապաշտպանության եւ հակահարվածի դիմեց Դաշնակցության եւ նրա հաղթ բռնկեցքը մարմնավորող հայուկապետ Նիկոլ Դումանի ղեկավարությամբ:

Թեեւ թուրք-թաթար ամբոխի խժժություններին սանձ դրվեց, բայց երկուստեք հարյուրավոր զոհեր ու վիրավորներ եղան, իսկ Բաքվի հայությունը ենթարկվեց նյութական հսկայական կորուստների: Այս աստիճան ծանր հանցագործության գլխավոր պատասխանատուն էր նահանգապետ Նակաշիճեն: Նրա սադրանքը անպատիժ չպետք է մնար թե՛ նույնիսկ հանցագործին արդար դատաստանի արժանացնելու համար, թե՛ նման սադրանքների եւ հանցագործությունների կրկնումը կանխարգելելու նպատակով: Եվ նահանգապետի դեմ մահապատիժ որոշեց ոչ միայն Դաշնակցությունը՝ հանձինս Բաքվի 337 Ոսկանապատի Կենտրոնական կոմիտեի, այլեւ՝ ռուս ընկերավարական-հեղափոխական կուսակցությունները իրենց հերթին մահապատժի վճիռ արձակեցին Նակաշիճեի դեմ: Մինչեւ անգամ ռուս սոցիալիստ-հեղափոխականները դիմեցին Դաշնակցությանը, որպեսզի իրենց զիջի բոլոր հեղափոխականների օրինությունը վայելող մահապատժի այդ որոշման գործադրությունը: Դաշնակցությունն ընդառաջեց ռուս սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության դիմումին, բայց նրանց կողմից կատարված՝ Նակաշիճեի ահաբեկման առաջին գործողությունն անհաջող անցավ: Ցարիզմի նենգ պաշտոնատարն անպայման պետք է պատժվեր, եւ ի վերջո պատժվեց Դրոյի ձեռքով:

Դրոն այդ շրջանում ծառայում էր ռուսական բանակում, բայց հազիվ էր լսել փետրվարի 6-ի՝ թուրք-թաթար ամբոխի խժժությունների լուրը՝ շտապել էր Բաքու ու իրեն տրամադրել Նիկոլ Դումանի եւ 337 Ոսկանապատի ԿԿ-ին: Դրոն նաեւ կամավոր իր թեկնածությունն առաջարկեց Նակաշիճեի ահաբեկման գործադրության համար, երբ ռուս հեղափոխականների առաջին փորձը ձախողվեց: Եվ Դումանն իր հավանությունը տվեց:

Գործողության կազմակերպման պատասխանատվությունը վստահվեց ԿԿ-ի անդամներից Աբրահամ Գյուլխանդանյանին, իսկ անփորձ ահաբեկչին՝ Դրոյին պիտի աջակցեր Գանձակեցի Կռո անունով՝ նույնպես երիտասարդ մի հեղափոխական: Եվ 1905թ. մայիսի 11-ին Նակաշիճեն ստացավ իր արժանի պատիժը: Նակաշիճեին նահանգապետարան փոխադրող ձիակառքը, շրջապատված ձիավոր թիկնապահներով, ամեն օր անցնում էր Պարապետի հրապարակից: Գործողության համար ճշտված օրը՝ մայիսի 11-ին, Կռոն պետք է դիրք բռնած լիներ հրապարակ տանող փողոցի ծայրին, իսկ Դրոն, իբրեւ հրա-

պարակի վրա զբոսնող անցորդ, տոպրակի մեջ դրած մահարկու ռումբը՝ պիտի սպասեր Կռոյի ազդանշանին՝ թե Նակաշիճեի կառքն է մոտենում: Բայց այդ օրը Կռոն ընդհանրապես չերեւաց, իսկ Ա. Գյուլխանդանյանը մի պահ երեւաց ու անհետացավ: Դրոն մնաց մենակ... Հրապարակի վրա գտնվող թուրք-թաթար մի պտղավաճառ մայթի վրա շարել էր իր վաճառվող մրգերը. թարմ կեռաս ուներ: Դրոն պտղավաճառից խնդրեց մի տոպրակ կեռաս, եւ մինչ վաճառողը կլցներ տոպրակը, հանկարծ լսվեցին ձիակառքի եւ ձիավորների ձայներ: Առանց այլայլվելու, Դրոն իր ձեռքի տոպրակից հանեց պատրաստի ռումբը, արագորեն վազեց առաջացող կառքի ուղղությամբ եւ նետեց ռումբը: Ահավոր պայթյունին հետեւեց հրապարակի խուճապահար անցորդների մեծ իրարանցումը: Դրոն խառնվեց ամբոխին եւ անհետացավ... Նակաշիճեն, իր սպասավորը, թիկնապահները եւ կեռասի պտղավաճառը տեղն ու տեղը սպանվեցին: Ահ ու սարսափը պատեց կայսերապետական ուժերին եւ ցարական ոստիկանությանը:

Բաքվի 337 Ոսկանապատի Կենտրոնական կոմիտեն հայ ժողովրդին եւ, ընդհանրապես, Անդրկովկասի հանրային կարծիքին ուղղված երկու անջատ հայտարարություններով ստանձնեց Նակաշիճեի մահապատժի պատասխանատվությունը: Իսկ 337 Կովկասյան պատասխանատու մարմինը, հատկապես ցարական պաշտոնյաներին ուղղված մի երրորդ հայտարարությամբ ազդարարեց Նակաշիճեի ահաբեկմանն ի պատասխան հակահայտարարվելու սադրող ուժերին, թե ավելի հատու պիտի լինի հայ հեղափոխականների հաջորդ հարվածը: Անշուշտ, որոշ ժամանակի համար զգաստացան ռուս պաշտոնատարները, նույնպես եւ թուրք-թաթար ազգայնամոլ շարժումների պարագլուխները: Բայց հրաձգությունը գործված էր արդեն, եւ ազգամիջյան լարվածությունն ու թշնամանքը մեկընդմիջտ սանձազերծված էին...

Փոքր ազգերը պետք է զոհաբերվեին՝ իբրեւ պարզ խաղաքարեր մեծապետական ինչ-ինչ շահերի ձեռքբերման եւ աշխարհաքաղաքական հաշիվների կարգավորման համար... 1905թ. մայիսի 11-ին Նակաշիճեի ահաբեկումը հայ ժողովրդի հատու պատասխանն էր թե՛ փոքր ազգերին զոհաբերելու պատրաստ մեծապետական ուժերին, թե՛ նրանց ձեռքին կույր գործիքի վերածված ազգայնամոլներին:

Արա Նախչարյան

ՏԱՎԱԿՑԱԿԱՆ
337 Արցախի կառույցն իր վշտակցությունն է հայտնում 337 Քաշաթաղի շրջանի «Միջնաբերդ» կոմիտեի անդամ Լաուրա Թորոսյանին՝ սիրելի հոր՝ Նույն կոմիտեի անդամ Ռազմիկ Թորոսյանի մահվան առիթով: